ԱՆԳԼԵՐԵՆ

9-րդ դասարանի ավարտական քննության ուղեցույց

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

| Հ/Հ | Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի | Ենթաառաջադրանքների քանակը | Առավելագույն միավորը |
|---|---|---|---|
| 1 | Ընտրովի պատասխանով | 18 | 18 |
| 2 | Կարճ պատասխանով | 14 | 14 |
| 3 | Ընդարձակ պատասխանով | 1 | 3 |
| | Ընդամենը | 33 | 35 |

**ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԸ**

1. Բառապաշար
2. Բառակազմություն
3. Չևաբանություն
4. Շարահյուսություն
5. Թարգմանություն
6. Կապակցված խոսք գրելու հմտություն

**ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Թեստը բաղկացած է 8 առաջադրանքից (33 ենթաառաջադրանք):

1-4-րդ առաջադրանքները (18 ենթաառաջադրանք) ընտրովի պատասխանով առաջադրանքներ են: Ընտրովի պատասխաններով ենթաառաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

**Առաջին** առաջադրանքում տրված է տեքստ և դրա վերաբերյալ 5 ընտրովի պատասխաններով ենթաառաջադրանքներ՝ պատասխանի չորսական տարբերակներով, որոնցից պետք է ընտրել ճիշտ տարբերակը:

Առաջին առաջադրանքին տրվում է առավելագույնը 5 միավոր:

**Երկրորդ** առաջադրանքը կազմված է 6 նախադասությունից, ամեն նախադասության համար տրված է քերականական տարբեր կարգեր արտահայտող չորսական տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտ տարբերակը:

Երկրորդ առաջադրանքին տրվում է առավելագույնը 6 միավոր:

**Երրորդ** առաջադրանքը կազմված է 3 նախադասությունից: Տրված են հայերեն նախադասություններ և յուրաքանչյուր նախադասության համար տրված է թարգմանության չորսական տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտ տարբերակը:

Երրորդ առաջադրանքին տրվում է առավելագույնը 3 միավոր:

**Չորրորդ** առաջադրանքը կազմված է 4 նախադասությունից: Նախադասությունները տրված են ուղղակի խոսքով և յուրաքանչյուր նախադասության համար տրված է ուղղակի խոսքի փոխակերպման չորսական տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտ տարբերակը:

Չորրորդ առաջադրանքին տրվում է առավելագույնը 4 միավոր:

5-7-րդ առաջադրանքները (14 ենթաառաջադրանք) կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են: Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

**Հինգերորդ** առաջադրանքը կազմված է փոքրիկ պարբերությունից: Նախադասություններից դուրս են բերված բայեր: Բայերը պետք է տեղադրել ճիշտ ժամանակաձևերով:

Հինգերորդ առաջադրանքին տրվում է առավելագույնը 5 միավոր:

**Վեցերորդ** առաջադրանքում տրված է 5 նախադասություն, որոնցում կա ավելորդ բառ: Պահանջվում է գտնել յուրաքանչյուր նախադասության ավելորդ բառը և դուրս գրել: Առաջադրանքը հնարավորություն է տալիս ստուգելու քերականական տարբեր երևույթներ:

Վեցերորդ առաջադրանքին տրվում է առավելագույնը 5 միավոր:

**Յոթերորդ** առաջադրանքում տրված են հարցերի պատասխանները և պահանջվում է ձևակերպել ճիշտ հարց յուրաքանչյուր պատասխանի համար:

Յոթերորդ առաջադրանքի ճիշտ պատասխանները կարող են լինել տարբեր, կախված այն բանից, թե աշակերտը ինչպես է ձևակերպել հարցը: Եթե հարցը քերականորեն և շարահյուսորեն ճիշտ է ձևակերպված՝ տրվում է 1 միավոր: Ցանկացած տեսակի 2 և ավելի սխալների դեպքում միավոր չի տրվում:

Յոթերորդ առաջադրանքին տրվում է առավելագույնը 4 միավոր:

**Ութերորդ** առաջադրանքում տրված 10 բառերից առնվազն 7-ով պետք է կազմել կապակցված տեքստ (5-7 նախադասություն):

Այս առաջադրանքի կատարումը գնահատվում է հետևյալ չափանիշներով.

1. Առաջադրանքին տրվում է 3 միավոր այն դեպքում, եթե տեքստը ունի ամփոփ, ավարտուն տեսք և թույլ է տրված մինչև 3 ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ:
2. Եթե տեքստը համապատասխանում է տրված պահանջին, բայց թույլ է տրված 3–5 ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ, հանվում է 1 միավոր:
3. Եթե տեքստը համապատասխանում է տրված պահանջին, բայց թույլ է տրված 6-8 ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ, հանվում է 2 միավոր:

Կապակցված խոսքը չի գնահատվում, եթե՝

- խոսքը չունի ամփոփ, ավարտուն տեսք,
- նախադասությունների քանակը 5-ից պակաս է,
- գործածված չեն տրված բառերից առնվազն 7-ը,
- եթե կա 9-ից ավելի ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ:

Ընտրովի և կարճ պատասխանները պետք է անցկացնել պատասխանների ձևաթուղթ:

Ընտրովի պատասխանով ենթաառաջադրանքների 4 պատասխանից պետք է ընտրել մեկը և «X» նշանով նշել ձևաթղթում:

Կարճ պատասխանով ենթաառաջադրանքների պատասխանները պետք է գրել ձևաթղթի մեջ:

Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանը ուղղելու երեք հնարավորություն, երկուսը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների համար, մեկը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար: Եթե որոշեք փոխել ընտրովի պատասխանով առաջադրանքի պատասխանը, ապա «**Սխալ նշված պատասխանները փոխելու տեղ**» դաշտում գրեք առաջադրանքի համարը և կատարեք ուղղումը:

***Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է*** լուծված առաջադրանքների միավորների գումարից (առավելագույնը 35 միավոր), որը սանդղակավորվում է: